Funded by the European Union

«Մեդիայի որակի եւ դիմակայունության նախաձեռնություն» ծրագիր

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ

2026

Հայաստանյան մեդիայում գենդերային խնդիրների լուսաբանման ուղեցույցը
պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Երեւանի մամուլի ակումբը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որակյալ (էթիկական) լրագրության հիմնարար խնդիրներից են լուսաբանման ժամանակ ներառականության ապահովումը եւ հասարակության բոլոր շերտերին հավասարաչափ (առնվազն համամասնորեն) լսելի դարձնելը։ Այս հարցում հիմնական մարտահրավերներից է գենդերային խնդիրների լուսաբանումը։

Սեռային խտրականությունը, թերեւս, մարդկային քաղաքակրթության պատմության հնագույն դրսեւորումներից է։ Հազարավոր տարիներ՝ այն ժամանակներից ի վեր, երբ չկային պետություններ ու արդի իմաստով՝ ազգեր, հայրիշխանական հասարակություններում կանանց դերը ստորադասվել է, նրանց վերագրվել են նսեմացնող ու հաճախ բացասական հատկանիշներ, կարծրատիպեր, ու կենցաղային հավատալիքներն ամրապնդվել են կրոնական նորմերով, որոնք հարյուրամյակներ նվաստացուցիչ ու տառապագին վիճակի մեջ են պահել կանանց։

Առավել խոցելի վիճակում են եղել գենդերային այլ ինքնություն կամ վարք ունեցող մարդիկ, որոնց ինքնությունը բացահայտելը մինչեւ օրս էլ մոլորակի շատ հատվածներում կարող է հանգեցնել քրեական հետապնդումների եւ անգամ մահապատժի, բազմաթիվ տեղերում՝ նորմավորված կամ սովորույթի ուժով գոյություն ունեցող ծաղրի, հետապնդման, ֆիզիկական ու հոգեկան բռնության վտանգի։

Անցած երկու հարյուր տարվա ընթացքում, մեծամասամբ քաղաքացիական շարժումների շնորհիվ, գենդերային հավասարության հարցը օրակարգային է դարձել ժողովրդավարական հասարակություններում՝ էականորեն փոխելով մարդկանց ընկալումները։ Այդուհանդերձ, անգամ իրավական եւ սոցիալական նորմերի ինտենսիվ փոխակերպումների պարագայում դժվար է ակնկալել, որ հազարամյա խտրական պրակտիկան արագորեն կվերանա։

Հատկապես ավանդական հասարակություններում, նաեւ Հայաստանում, գենդերային անհավասարության հաղթահարման խնդիրը շարունակում է արդիական մնալ, եւ այս հարցում առանցքային նշանակություն ունի մեդիայի վարքագիծը։

Սույն ուղեցույցը պարունակում է լրագրողներին եւ լրատվամիջոցներին հասցեագրված խորհուրդներ, որոնք կնպաստեն գենդերազգայուն լուսաբանմանը։

1. **Ապահովել տերմինաբանության ճշգրտությունն ու զգայունությունը**
   - Հրապարակումներում խուսափեք կարծրատիպային ձեւակերպումներից, նսեմացնող տերմիններ կամ այնպիսի բառապաշար գործածելուց, որոնք թերարժեւորում կամ թյուր կերպով են ներկայացնում գենդերային որեւէ ինքնություն։
   - Գործածեք ճշգրիտ ձեւակերպումներ՝ գենդերային ինքնության արտահայտման կամ դերերի վերաբերյալ՝ փորձելով դրանք համարժեք դարձնել համընդհանուր ընդունված տերմինաբանությանն ու նորմերին։

- Գենդերային խնդիրներ լուսաբանելիս խուսափեք սենսացիոն, սուր վերնագրեր կամ ձեւակերպումներ ընտրելուց, հատկապես այն դեպքերում, երբ լուսաբանում եք ֆիզիկական բռնության, հոգեբանական ճնշման, խտրականության կամ դրանց առնչվող հանրային բանավեճը:

2. Խուսափեք գենդերային կարծրատիպերից

- Խուսափեք գենդերային դերերը սահմանափակող կարծրատիպերի ամրապնդումից՝ հատկապես կանանց ընտանեկան դերը, հանրային կյանքը ներկայացնելիս:
- Մարդկանց մասին պատմեք՝ հիմնվելով նրանց ձեռքբերումների, ներդրման եւ բնավորության վրա, ոչ թե գենդերային նախապաշարումների կամ կանխակալ ակնկալիքների:
- Պատմեք դրական պատմություններ, որոնք կկոտրեն կարծրատիպերը, կձեւավորեն իրականությունն արտահայտող պատկերացումներ տղամարդկանց ու կանանց վերաբերյալ:
- Կանայք չպետք է հայտնվեն զուտ կանանց խնդիրներին վերաբերող պատմություններում: Փորձեք կանանց իբրեւ աղբյուր ընդգրկել հնարավորինս տարբեր ոլորտներ ներկայացնող պատմություններում:
- Վերանայեք զրուցակիցների («նյուսմեյքերների») ցանկը, որոնց ամեն անգամ անդրադառնում եք նոր նյութ պատրաստելիս: Եթե ցուցակում ամբողջությամբ կամ մեծ մասամբ տղամարդիկ են, ապա վերանայեք այն: Տարածված մոլորություն կա, թե Հայաստանում տղամարդիկ գերակշռում են հանրային գրեթե բոլոր ոլորտներում՝ գիտական, քաղաքական, մշակութային կյանքում, բիզնեսում, սպորտում, սակայն ցանկության դեպքում հեշտությամբ կարելի է գտնել կանանց, որոնք առնվազն նույնքան հետաքրքիր եւ ինֆորմատիվ զրուցակից կարող են լինել:
- Ուշադիր եղեք ձեր հոդվածում կանանց իրական դերի մասին ենթադրություններ անելիս: Խուսափեք կանանց ու տղամարդկանց մասին հասարակության ունեցած կարծրատիպերը վերարտադրելուց կամ սրելուց:

3. Լուսաբանեք բազմակողմանի եւ ներկայացրեք տարբեր «ձայներ»

- Համոզվեք, որ գենդերային հարցերի լուսաբանման ժամանակ ներկայացված են տարբեր տեսակետներ, տարբեր «ձայներ»: Լրատվական նյութերում ներառեք սոցիալական, տնտեսական եւ մշակութային շերտեր ներկայացնող տարբեր մարդկանց:
- Նյութերում ներառեք գենդերային հարցերով փորձագետների, սոցիոլոգների, հոգեբանների, հատկապես՝ երբ նյութերը վերաբերում են բարդ կամ վիճելի դեպքերին:
- Հաշվի առեք աղբյուրների (զրուցակիցների) գենդերային ինքնությունը, խուսափեք տղամարդկանց կարծիքը որպես առավել արժանահավատ կամ հեղինակավոր ներկայացնելուց: Ջանացեք առավելագույնս հավասարաչափ ներկայացնել կանանց ու գենդերային այլ ինքություն ունեցող անձանց տեսակետները:

4. **Գենդերային հարցերը համապատասխանեցրեք հայաստանյան համատեքստին**
   - Գենդերային խնդիրները լուսաբանելիս հաշվի առեք Հայաստանի մշակութային, պատմական, կրոնական եւ այլ առանձնահատկությունները՝ շարունակելով մնալ օբյեկտիվ:
   - Փորձեք հավասարակշռել ավանդական ու ժամանակակից տեսակետները՝ ներկայացնելով թե՛ եղած վիճակը, թե՛ շարունակաբար զարգացող սոցիալական նորմերը:

5. **Պաշտպանեք աղբյուրները եւ հարգեք անձնական կյանքը**
   - Պահպանեք գաղտնիությունը եւ մի բացահայտեք (նաեւ՝ անուղղակիորեն) աղբյուրների ինքնությունը, մանավանդ զգայուն թեմաներ՝ ընտանեկան բռնություն, սեռական ոտնձգություն կամ գենդերային հողի վրա խտրականություն լուսաբանելիս:
   - Անչափահասների կամ գենդերային բռնության ենթարկվածների մասին տեղեկություն տարածելիս ստացեք նրանց, նրանց ծնողների կամ խնամակալների թույլտվությունը:
   - Արեք հնարավորը, որպեսզի ընթերցողը (դիտողը, ունկնդիրը) տպավորություն չստանա, թե իբր զոհն է իր վարքով դրդել բռնության (վառ հագուստ է կրել, համաձայնել է հանդիպել եւ այլն):
   - Կարեւոր է ամենայն պատասխանատվությամբ լուսաբանել ընտանեկան բռնությանը կամ սեռական հետապնդումներին վերաբերող դեպքերը՝ վերհանելով դրանց հանգամանքները, հատկապես՝ իրավական քննության ընթացքը: Ընտանեկան բռնությունը, ցավոք սրտի, դեռ առավելապես համարվում է ներքին՝ ընտանեկան խնդիր եւ ոչ հանցանք, նույնիսկ, երբ լուրջ հետեւանքներ է թողնում: Ուսումնասիրեք օրենսդրությունը, հատկապես «Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը, ինչպես նաեւ իրական պրակտիկան: Վերհանեք օրինաչափությունները: Օրենքը կանանց բավարա՞ր չափով է պաշտպանում իրենց ամուսինների կամ զուգընկերների բռնությունից: Ինչպե՞ս են ընթանում նման դեպքերում քրեական վարույթները եւ դատավարությունները: Հարազատները կամ իրավապահները զոհի վրա ճնշում չե՞ն գործադրում՝ «ընտանիքը պահպանելու» նպատակով լռելու եւ հետագա հնարավոր բռնության դեպքերի հետ հաշտվելու համար եւ այլն:
   - Մեկ այլ խնդիր է աշխատավայրում սեռական հետապնդումը, որը եւս կարեւոր է պատշաճ լուսաբանել՝ հաշվի առնելով նախորդ պարբերությունում շարադրված կետերը:
   - Բռնության դեպքերի լուսաբանումներն ուղեկցեք ծանուցումներով, որոնցով ընթերցողին կտեղեկացնեք հնարավոր բռնության կամ հետապնդումների դեպքում աջակցության կենտրոններ կամ ոստիկանություն դիմելու անհրաժեշտության եւ կապի միջոցների մասին:

6. **Առաջնահերթություն տվեք գենդերային առանձնահատկությունները հաշվի չառնող պատկերներին**
   - Տեքստերն ուղեկցեք այնպիսի պատկերներով, որոնք չեն խորացնում վտանգավոր կարծրատիպերը, խրախուսում են բազմազանությունն ու տարբերվող ինքնության հանդեպ հարգանքը:

- Գործածեք այնպիսի պատկերներ, որոնք հարգալից են ներկայացնում մարդկանց ինքնությունը։
- Խուսափեք ընդհանրացնող-կարծրատիպային կամ թեմայի հետ կապ չունեցող պատկերների գործածումից, որոնք կարող են ակամա խորացնել բացասական ընկալումները։

7. Կանանց մասնակցությունը քաղաքական գործընթացներին ներկայացրեք ըստ պատշաճի

- Ընտրական արշավները լուսաբանելիս դրանց մասնակցող կանանց դերը ներկայացրեք առնվազն համամասնորեն։ Ծանոթացեք կուսակցությունների ընտրական ցուցակներում ընդգրկված կին թեկնածուներին, ի հայտ բերեք նրանց հանրային գործունեության ուշագրավ կողմերը, քաղաքական հայացքները եւ ոչ թե անձնական կապերը կամ «կանացիության» հետ կապված առանձնահատկությունները։
- Վերլուծական հոդվածներում եւ դիրքորոշում արտահայտող նյութերում խուսափեք քաղաքական գործիչներին քննադատել՝ աչքի տակ առնելով նրանց գենդերային ինքնությունը։ Կենտրոնացեք քաղաքական գործչի գործունեության, հանրային կարեւորություն ներկայացնող հարցերում նրա դիրքորոշման վրա, ոչ թե նրա անձի, արտաքինի կամ գենդերային ինքնության։
- Առավելագույնս խուսափեք լրատվական նյութերում վերարտադրել երրորդ անձանց կողմից արվող պիտակավորումները, քաղաքական գործիչների հանդեպ գենդերային ինքնությամբ պայմանավորված խտրական, առավել եւս՝ վիրավորական արտահայտությունները։ «Ես ընդամենը մեջբերել եմ զրուցակցի խոսքը» արդարացումը միայն ընդգծում է լրագրողի ցածր պրոֆեսիոնալիզմը։

8. Թույլ մի տվեք, որ սոցցանցային էջերը դառնան խտրականության տարածման հարթակ

Հայաստանում գենդերային հարցերում հավասար հնարավորություններ ապահովելուն ուղղված իրավական եւ այլ կարգավորումներին զուգահեռ՝ դեռեւս մտահոգիչ են խոցելի խմբերի նկատմամբ տարատեսակ ճնշումները։ Մասնավորապես՝ սոցցանցերում, հատկապես՝ հանրային ակտիվություն դրսեւորող կանանց շատ հաճախ թիրախավորում են նրանց գենդերային պատկանելության պատճառով։

Ուստի անհրաժեշտ է.

- մոդերացիայի ենթարկել լրատվամիջոցի սոցցանցային հրապարակումների մեկնաբանությունների բաժինը,
- մեկնաբանություններում թույլ չտալ գենդերային հատկանիշներով խտրականության կամ ատելության խոսքի տարածում,
- խրախուսել հավասարությունը եւ հարգանքն ընդգծող վարքագիծը։

9. Գենդերային հարցերը ներկայացնելիս մնացեք օբյեկտիվ եւ հավասարակշռված

- Գենդերային հարցերով բանավեճ լուսաբանելիս աշխատեք չսրել այն։
- Ջանացեք ներկայացնել փաստերը՝ խուսափելով տարաձայնությունները խորացնելուց կամ չճշտված լուրեր տարածելուց։

- Ստուգեք զրուցակիցների (բանավեճի մասնակիցների) հայտարարություններում բերված փաստերի ճշգրտությունը եւ խուսափեք վիրավորական տեսակետները տարածելուց:

10. Աջակցեք գենդերային հավասարության հանրային ընկալման ձեւավորմանը

- Խրախուսեք այն բովանդակության տարածումը, որն ամրապնդում է գենդերային հավասարության, մարդու իրավունքների պաշտպանության եւ մասնակցայնության ընկալումները:
- Առանձնացրեք այն պատմությունները, որոնք ներկայացնում են գենդերային հավասարության դրական կողմը՝ ընտանիքում համատեղ պատասխանատվությունն ու պարտականությունները, հավասար իրավունքները:
- Պատմեք մասնակցային հասարակության սոցիալական, տնտեսական եւ անվտանգային առավելությունների մասին:
- Գենդերային խնդիրների լուսաբանումը դարձրեք ձեր աշխատանքի մասը:

11. Պարբերաբար ծանոթացեք միջազգային լավագույն փորձին եւ ուղեցույցներին

- Գործածեք այնպիսի հանրահայտ եւ հեղինակավոր կազմակերպությունների ուղեցույցներն ու խորհուրդները (ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՕ, միջազգային լրագրողական կազմակերպություններ եւ այլն), որոնք ներկայացնում են գենդերային խնդիրների լուսաբանման լավագույն փորձը:
- Հնարավորության դեպքում համագործակցեք գենդերային հարցերով տեղական եւ միջազգային փորձագետների, ՀԿ-ների, աջակից խմբերի հետ՝ զարգացող չափանիշներին ու միտումներին տեղյակ լինելու համար:
- Միջազգային փորձը տեղայնացրեք՝ հաշվի առնելով հայաստանյան իրողությունները:

12. Հրաժարվեք գենդերային ապատեղեկատվության ակամա կամ միտումնավոր տարածումից

<u>Ի՞նչ է գենդերային ապատեղեկատվությունը</u>

Գենդերային ապատեղեկատվությունը տեղեկատվության (լուր, մեկնաբանություն, վերնագիր, պատկեր, տեսանյութ կամ պատմույթ) միտումնավոր կամ ոչ միտումնավոր աղավաղումն է, որը հիմնված է սեռի կամ գենդերի վերաբերյալ սխալ, մանիպուլյատիվ կամ խեղաթյուրված պատկերացումների վրա եւ նպաստում է խտրականությանը, վախի տարածմանը, հասարակական բեւեռացմանը կամ որոշ խմբերի վարկաբեկմանը: Այն հաճախ օգտագործում է կարծրատիպեր, կեղծ ընդհանրացումներ եւ էմոցիոնալ լեզու՝ հանրային ընկալումները ձեւախեղելու համար:

Գենդերային ապատեղեկատվությունը կարող է դրսեւորվել ինչպես քաղաքական եւ հանրային բանավեճում, այնպես էլ առօրյա լրահոսում՝ հատկապես զգայուն թեմաների (ընտանիք, երեխաներ, կրթություն, անվտանգություն, «ավանդական արժեքներ») շուրջ:

Գենդերային ապատեղեկատվության ուղղակի կամ անուղղակի դրսեւորումներից են.

- Բացահայտ կեղծ կամ չստուգված պնդումները գենդերի վերաբերյալ (օր.՝ «գենդերային հավասարությունը միտված է օրենքով սեռի փոփոխություն պարտադրելուն»),
- Կեղծ մեջբերումները, սխալ թարգմանությունները կամ տվյալների դիտավորյալ խեղաթյուրումը,
- Սենսացիոն վերնագրերը, որոնք հակասում են նյութի բովանդակությանը եւ վախ են սերմանում,
- Գենդերային կարծրատիպերի ակամա վերարտադրումը՝ առանց բացահայտ կեղծ պնդումների,
- Այնպիսի ձեւակերպումները, որոնք որպես նորմա են ներկայացնում խտրականությունը, անգամ եթե այն դրական երանգ ունի («թույլ սեռ», «ոչ կանացի վարք», «տղամարդ աղջիկ», «տղամարդուն վայել հաստատակամություն» եւ այլն),
- Համատեքստից կտրված փաստերի կամ պատկերների ներկայացումը, որոնք աղավաղում են իրականությունը,
- Մասնավոր դիրքորոշման ներկայացումը՝ որպես ընդհանուր կարծիք։

«Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում գենդերային ապատեղեկատվությունը հաճախ տարածվում է ոչ թե որպես բացահայտ կեղծ լուր, այլ արժեքային, մշակութային կամ անվտանգային հռետորաբանության մեջ փաթեթավորված տեղեկատվություն։ Սա բարդացնում է դրա ճանաչումն ու հակազդումը եւ մեծացնում է մեդիայի պատասխանատվությունը՝ թեմաները զգայուն եւ հավասարակշռված լուսաբանելու հարցում։

Ստորեւ ներկայացված խորհուրդներն ուղղված են գենդերային ապատեղեկատվության կանխարգելմանը.

Ա. Ստուգեք պնդումների աղբյուրն ու նպատակադրումը

- Պարզեք՝ տվյալ պնդումը փաստ է, կարծիք, թե՞ մեկնաբանություն,
- Ուշադրություն դարձրեք՝ արդյո՞ք թեման օգտագործվում է վախ, սպառնալիք կամ «բարոյական խուճապ» ստեղծելու համար։

Բ. Հետեւեք համընդհանուր կանոնին՝ խուսափեք սենսացիոն եւ մանիպուլյատիվ վերնագրերից

- Վերնագիրը չպետք է աղավաղի նյութի բովանդակությունը կամ ուժեղացնի կարծրատիպերը,
- Խուսափեք անորոշ ու կարծրատիպային ձեւակերպումներից, ինչպիսիք են «ավանդական արժեքներին սպառնացող վտանգ», «ընտանիքի քայքայում» եւ այլն։

Գ. Օգտագործեք ճշգրիտ եւ ներառական լեզու

- Խուսափեք որեւէ գենդերային ինքնություն նսեմացնող, սեռային աստիճանակարգ (հիերարխիա) ենթադրող բառապաշարից,
- Նախապատվություն տվեք մասնագիտական եւ չեզոք տերմիններին՝ անհրաժեշտության դեպքում տալով պարզ բացատրություն։

Դ. Տրամադրեք համատեքստ եւ տարբեր կարծիքներ

- Մի՛ ներկայացրեք ծայրահեղ կամ լուսանցքային (մարգինալ) դիրքորոշումները որպես գերակշիռ կամ համարժեք կարծիք,
- Ներգրավեք ոլորտի մասնագետների, հետազոտողների եւ իրավապաշտպանների մեկնաբանությունները:

Ե. Տարբերակեք գենդերը, սեռը, գենդերային ինքնությունն ու սեռական կողմնորոշումը

- Մի՛ խառնեք տարբեր հասկացությունները մեկ նյութում կամ մեկ պնդման մեջ,
- Սխալ համադրումները հաճախ դառնում են անուղղակի կամ ակամա ապատեղեկատվության (misinformation) աղբյուր:

Զ. Ուշադիր եղեք տեսողական բովանդակության (վիզուալի՝ պատկերների, գույների, կադրավորման) ընտրության հարցում

- Պատկերները կարող են վերարտադրել նույնքան ուժեղ կարծրատիպեր, որքան տեքստը,
- Խուսափեք ծաղրանկարային, վախեցնող կամ խարանող վիզուալներից:

Է. Արձագանքեք ապատեղեկատվությանը՝ հնարավորինս առանց այն վերարտադրելու

- Ապատեղեկատվությունը հերքելիս մի՛ կրկնեք այն որպես հիմնական ուղերձ:
- Կենտրոնացեք փաստերի եւ բացատրության վրա, ո՛չ թե կեղծ պնդման:

Կարեւոր հղումներ

Գենդերզգայուն լուսաբանման համար կարեւոր է ծանոթանալ եւ պարբերաբար վերընթերցել հետեւյալ ձեռնարկներն ու ուղեցույցները.

- Բազմազանության լուսաբանման ձեռնարկ. Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի ձեռնարկի թարմացված տարբերակը լույս է տեսել 2024թ. աշնանը: Կարեւոր խորհուրդներից բացի, այն նաեւ պարունակում է թարմ դեպքերի ուսումնասիրություններ, որոնք մանրամասնորեն նկարագրում են հայաստանյան մեդիայում լուսաբանումների խնդիրները՝ համապատասխան գլուխներում կոնկրետ օրինակների վրա ցույց տալով ոչ միայն՝ թե ինչպես է պետք, այլ նաեւ՝ թե ինչպես չի կարելի լուսաբանել գենդերային խնդիրները:
- Գործնական ուղեցույց խոցելի խմբերի խնդիրները լուսաբանող լրագրողների համար, ընդունված է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2023թ. հունիսի 25-ի նիստում:
- Զանգվածային լրատվության միջոցներում խտրականության դրսեւորումները բացառելու եւ հանդուրժողականություն ապահովելու վերաբերյալ ուղեցույց, ընդունված է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2017թ. մայիսի 17-ի նիստում:

Սույն Ուղեցույցը հաստատվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի կողմից